Ղևոնդ Ալիշան

Հին հավատք կամ հեթանոսական կրոնք հայոց

Պաշտամունք, պաշտամունքարան, պաշտամունքավարներ, սպասք

Այս գրքի սկզբում բացատրվեց, թե ինչ է պաշտամունքը, որի կատարման կերպը և հանգամանքները այդպես էլ ընդհանուր անվանումով կոչվում են՝ պաշտամունք, իսկ առանձին ձևերն ու մասերը՝ ծես: Որքան էլ հետաքրքրկան, թեև ոչ հարկավոր լինի սրանք իմանալը, պաշտելիների հետ և է՛լ ավելի կորսվել ու մոռացվել են: Պետք է որ հայոց հեթանոսական ծեսերն էլ առավել կամ նվազ չափով նման լինեին նրանց մերձավոր ազգերի ծեսերին, սակայն քանի որ դրանք պատմության մեջ հիշատակված չեն, չենք ուզում օտարների մասին ասվածները մեջբերել . ցանկացողը կարող է գտնել ընդհանուր դիցաբանության մասին գրքերում: Հիշատակենք այնքանը միայն, որքան պահանջում են իմանալ պաշտամունքի բառերը, որոնցից գլխավոր պաշտամունքարան-ն է:

Պաշտամունքարան

Հայտնի կամ հասարակական վայր է, որտեղ աղոթքով, պատարագով, զոհաբերությամբ ու պես-պես արարողություններով կամ ծեսերով կատարվում է պաշտամունքը: Հիշեցինք, որ նախահայրերը առաջներում (եթե աղոթքները կատարում էին իրենց տան մեջ) զգալի ու տեսանելի պաշտամունքը կատարում էին անշեն, բաց տեղերում, դա լիներ իրենց ագարակն ու դաշտը, բարձրիկ մի վայր, թե ծառոտ տեղեր, անտառներ և մայրիների պուրակ: Վերջինս մեզ հիշեցնում է Դից մայրի կոչվածը Վիշապաձորում, որ Գաբեղյանք գավառում է՝ Երասխ գետի եզերքում՝ Կաղզվանի մոտ, որտեղ ձորի անունն էլ և այլ

հիշատակներ հայտնի են դարձնում դիցապաշտության նշանավոր մի կենտրոն: Տե՛ս նաև այն, ինչ նախորդիվ ասել ենք ծառերի պաշտամունքի մասին: Բացօթյա տեղին հակառակ՝ շատ մոլորահավատներ, որ և մոլորաբարո էին, ցանկանում էին իրենց սնոտիքը և զզվելիքը կատարել գետնի երեսից էլ վար կամ նրա ծածուկ փոսերի ու հորերի մեջ՝ իրենց խղճի համեմատ, որ, լույսի ճշմարտությունից հեռանալով, մթություն է սիրում: Ասվածը տեսանք քարերի պաշտամունքի մեջ, և այդպես է գրում նաև մեր հին վարդապետներից մեկը («Եկեղեցու խորհուրդ»-ում) . «Դեւքն խաւարասէրք են, վասն այնորիկ և որ յանուն նոցա բագինքն՝ շինեալք էին ի գետնափորս և ի խաւարին տունս . քանզի համարձակ լիցին դեւք՝ փայլատակմամբք և արհաւրօք և ահագին դնդրնչմամբ կեղծաւորել»: Դիքերի պաշտամունքի մեջ էլ գլխավոր պաշտամունքարանները տեսանք բաց և ընդարձակ վայրերում, ինչպես Բագրևանդում և Աշտիշատում: Հայտնի չէ, թե արդյոք այն ժամանակ էլ էին այդպիսի վայրերը ընդհանուր անվամբ պաշտամունքարան կոչվում, ինչպես էր քրիստոնեության օրոք, և ինչպես գրում է Ագաթանգեղոսը, թե ոչ, բայց հայտնի են տաճար և մեհյան անվանումները:

Առաջին անվանումը, որ նմանություն չունի այլ ազգերի նույնանիշ բառերի հետ, եթե հատուկ հայկական անծանոթ իմաստով մի բան չէ, հավանորեն զուգակից է պարսկերեն թեճեր բառին, որ նշանակում է «ձմեռնատուն»: Եվ բնական է հետևեցնելը . քանի որ ձմռանը մանավանդ հայոց երկրի պես ձյունապատ վայրում պաշտամունք կատարել հնարավոր չէր, անհրաժեշտ էր ծածկված ու կառուցված մի տեղ, և ահա սա կարող էր լինել տաճարը (թողնենք «տա-ճար» ծաղրելի ստուգաբանությունը): Ներկայիս կամ քրիստոնեական իմաստով տաճար նշանակում է մեծ և վայելուչ շենքով պաշտամունքարան, այսինքն՝ եկեղեցի (հռոմեացիների Templum-ին համապատասխան), ինչպես և մեծ ու ճոխ ապարանք, նաև ուրախության, խնջույքի, կոչունքի ժողովարան ու ճաշարան: Մեր հին նախնիների պաշտամունքարանի ավելի հատուկ անուն է թվում մեհյան-ը, և վկայությունը դրանից բարդվածներն են (մեհենընկալ, մեհենապետ, մեհենաբարձ, մեհենազարդ և այլն), որոնք ոչ միայն զուշակել են տալիս մեհյանի պաշտամունքավարներին ու ծեսերը, այլև երբեմն էլ՝ պաշտելին կամ կուռքը: Մեհյան է կոչվել մինչև իսկ կուռքը: Բառի ծագումն էլ հավաստի չէ, բայց հավանական է, որ լլինի լուսնի մահիկ և պարսկերեն մահ բառերից . ավելի շուտ

դրանից, քան Միհր անունից էլ ծագած է թվում մեհենական ամսանունը: Ըստ հնչման՝ մոտ է նրանց մեհիյնե բառին, որ նշանակում է պարզապես «ամսական» . հիշենք նաև մեր մեհեկան ամիսը: Իդկ դրանցից հետևեցնելն ու ստուգաբանելը թողնում ենք բանասերների կամքին ու իմացությանը՝ հիշեցնելով նաև մարդու Մեհևան հատուկ անունը և Մեհնունյաց տոհմը, որի անունը հավանորեն առնվել է մեհյանների պաշտամունքավարությունից, բայց կարող է ծագած լինել նաև անծանոթ ու հին բառից, որպիսին է մեհենդակ-ը: Կան նաև Մեհսուպ, Մեհեր, Մեհրիար անունները, բայց սրանք հանդիպում են ավելի նոր ժամանակներում և թվում են օտարամուտ:

Դիքերին կենդանիների նվիրաբերելը, մորթելով լինի, թե այրելով, պահանջվում է հատուկ անուն եթե ոչ բովանդակ պաշտամունքարանի, ապա գոնե նրա մի մասի համար (ինչպես մեր եկեղեցիներում էլ մատուռը և խորանը), և ասվում է զոհարան ու զենարան, գուցե և սպանդարան, որ ունի նույն կամ մոտ նշանակությունը (մորթելու տեղ) և որի պաշտամունքավարներին հատուկ եղավ Սպանդունիք անունն ու տոհմը, որոնց, ինչպես ասում է Խորենացին, Վաղարշակը կարգեց «ի վերայ Զենարանաց»: Վանի բերդում փորված սենյակաձև քարայրներում, նույնպես և Դերջանում գտնվող Բագառիճում մինչև հիմա պատերի ներքևում երևում են խողովակակերպ նեղ ու երկար խորություններ, և կարծվում է, թե զոհերի արյունը թափելու համար են: Տեսնողներից ոմանք կարծում են, որ պատերի վրա նշմարում են ցամացած արյան հետքեր:

Բագին

Երբեմն այսպես է անվանվում նույնիսկ մեհյանը, բայց սովորաբար՝ նրա գլխավոր մասը, ուր դրվում էին պաշտելին, կուռքը և զոհը, ինչպես մեր եկեղեցիների սեղանն է: Բագինը երբեմն լինում էր նաև շարժական, այսինքն՝ սեղանն ու կուռքը մեկտեղ, փոքր ծածկով կամ առանց դրա վերցնելով, տեղից տեղ էին տանում, ինչպես քրիստոնյաներն էլ պատերազմի ժամանակ շարժական սեղաններ են տանում: Բագին բառը շատ հին ազգերի մեջ է լսվում: Օրինակ՝ սլավոնների Bog-ը, որ «Աստված» է նշանակում, ըստ մեզ՝ դառնում է բոգ կամ բագ, որից էլ հուր-բագ, հին պարսկերեն՝ բագա (ինչպես Պերսեպոլիսի

բևեռագրերում), որից էլ՝ Բաշիստան կամ Բիհիստուն, այսինքն՝ Բագաստան լեռան անունը: Հիշենք նաև հին հնդիկների գրքերի Բհագա (Bhaga) կոչված չաստվածին և Բհագավանին՝ նրանց Վիշնու և Շիվա չաստվածներին, նաև փոյուգիացիների Բագեոս կամ Բագվե մեծ չաստվածին, չինացիների, հնդիկների և ճապոնացիների բագոտ կամ պագոտ կոչվող մեհյանները: Ասվածը ենթադրել է տալիս, թե նախքան պարթևների՝ Հայաստանին տիրելը այդ բառը ծանոթ էր մեր ազգակիցներին և սրանց ժամանակներում այլ պահլավերեն անունների հետ ավելի հաճախ գործածվեց, և իբրև օտար՝ Ագաթանգեղոսի թարգմանիչը հարկ է համարել բացատրել, թե Բագավան նշանակում է «դիքերի ավան», Բագահառիճ՝ «դիքերի գյուղ»: Սասանյանների տիրապետության ժամանակ բագին կոչվեցին նաև պաշտելու կրակի սեղանները, որոնց վրայի մի փոքր փորվածքն էլ բավական էր կրակն ընդունելու համար, և ըստ այդմ՝ շինվում էին նաև փոքրիկ բագիններ՝ շարժական կամ կանգուն:

Հաշտից տեղեր

Զոհարանի նշանակությամբ, ըստ պարսկերեն հաշտ բառի, հայերիս մեջ ծանոթ են Տարոնում, որտեղ Վաղարշակն այդ պաշտամունքարանները, ըստ Զենոբի պատմության, հանձնեց հնդիկ Գիսանեին, և վայրը բնակարանների հետ կոչվեց Հաշտիշատ, որը երբեմն թարգմանությամբ էլ կոչվում է Մեհենագյուղ: Հնդիկները իրենց նախնիներին նվիրած պաշտամունքարանը կոչում էին աշտակա, իսկ պաշտամունքի արժանավորին կամ սրբազանին՝ յաշդանիս Հաշտ-ը նշանակում է թե՛ բագինը և թե՛ նրա վրա նվիրաբերվածը կամ զոհը: Թեև հին հայերի հավատքում երկու անուններն էլ ընդունված են, բայց նվիրաբերությունների ու զոհաբերությունների հատուկ տեղը նրանց հասարակ լեզվով կոչվում է սեղան . այդպես է կոչվում նաև կերակուրներ դնելու տեղը կամ շինվածքը: Բառի ծագումը անշուշտ պիտի լինի սեղ-ից, բայց դրա իմաստը անհայտ է:

Սեղան անվան կազմության նման է և խոր-ան (ինչպես և բեր-ան) բառը՝ իր մեջ մի բան ընդունելու հարմար դիրքի նշանակությամբ: Եվ ինչպես ներկայումս է եկեղեցիների սեղանների բոլորտիքը խորան կոչվում, թվում է՝ այդպես էլ՝

մեհյանների սեղաններինը, որոնցից այդ անունը հավանաբար անցել է քրիստոնեական շինվածքին և ըստ բառի սովորական նշանակության՝ ցույց է տալիս փորված (պատի մեջ) խոր տեղ, թեև ունի նաև այլ մոտավոր նշանակություններ, ինչպես՝ «վրան»: Եվ հայտնի է դառնում, որ այն խոր տեղում պիտի զետեղված լիներ պաշտելի առարկան կամ կուռքը: Այսպիսին կարծվեցին նաև Վանի վերոհիշյալ քարակտուր սենյակների պատերի մեջ փորված խորշերը, որոնք ուրիշները համարում են սափորների կամ տապանների տեղ: Բագառիճի քարափոր սենյակում էլ է երևում խորունկ մի գոգավորություն, որ համարվում է կուռք դնելու տեղ: Այսպիսի մի բան կարող է իմացվել նաև Թովմա Արծրունու՝ Արտաշես Բ-ի մասին ասածից, որը Վանի մոտերքում՝ երեք բլուրների միջև՝ մի գոգաձև հովտում, շինեց «աշտարակ բարձրաձեւ փորուածոյ միջոցաւ, և ի վերայ նորա կանգնէ զԱստղկան պատկերն, և մօտ նորա տուն գանձու պաշտպանութեան կոոցն»: Իրենց ենք թողնում՝ գանձե՞րն էին կուռքերին պաշտպանում, թե՞ կուռքերին էր վայել գանձերը պաշտպանել, բայց հայտնի է, որ բոլոր կռատների մեջ կամ մոտ կային գանձարաններ, մեծամեծերի և փոքր մարդկանց նվիրատվությունների պահատեղիներ, ինչպես հավաստում են Ագաթանգեղոս և Զենոբ պատմիչները, նաև ուրիշները՝ Լուսավորիչի գործերը հիշողները:

Այսպիսի տեղերը ապահովության համար պիտի լինեին ոչ միայն ամուր և գոց, այլև ծածուկ՝ հայտնի միայն քուրմերին և քրմապետերին: Եվ այս պատճառով էլ թվում է, որ նույնիսկ մեհյանները՝ իբրև աղոթատներ, ժողովրդի համար շատ մտնելի չէին և ոչ իսկ ընդարձակ, ինչպես և հին հայոց եկեղեցիները: Պաշտամունքասեր ժողովուրդը իր աղոթքը, նվիրաբերությունները և զոհաբերությունները կատարում էր մեհյաններից դուրս բակում կամ ոչ փակ տեղում՝ բագինների դիմաց կանգնած: Դա հայտնի է դարձնում նաև առաջին մեհյանները շատացնող աշխարհակալ Տիգրանի մասին ասվածը . «Մեհեանս շինեալ և առաջի մեհենիցն բագին . . . կանգնել, զոհս՝ ամենայն նախարարացն հրամայէ մատուցանել, հանդերձ երկրպագութեամբ»: Ասվածից գուշակվում է, որ հասարակ և աղքատ ժողովուրդը բագինին նույնիսկ չէր մոտենում, յալ իր պաշտամունքը կատարում կամ հանդեսները դիտում էր՝ հեռվում կանգնած: Եվ հրեական տաճարի պես ներսը և ներքնագույն կողմը՝ իբրև սրբարան, չասեմ՝ սրբություն սրբոց, մտնում էին միայն քահանաները և առավել բարձր ու ցածր

կարգ ունեցող պաշտամունքավարները: Զենոբը (և ըստ նրա խոսքի՝ նաև «Հայսմավուրք»-ը) վկայում է Տարոնի Աշտիշատի երեք հռչակավոր բագինների (մեհյանների) մասին, որոնք էին «բարձրաշէնք, և մեծամեծ ծախուք զարդարեալ յոսկւոյ և արծաթոյ և մարգարտաց և յականց պատուականաց», սակայն չի ասում «մեծագույն» կամ «ընդարձակ», այլ նրա և Թովմա Արծրունու ասածներից պարզ է դառնում շենքի ձևի հատկությունը, որ բարձրաշեն և աշտարակաձև լինելն էր: Արդյոք այդպիսի՞ շինություններ էին ասորեստանյան աշտարակաձև զիկկուրատները, որոնք մի տեղ հիշատակեցինք Ծկրավոր մոլորակի կամ աստղի առիթով:

Ինչպիսին էլ լինեն բագինները, մեր պատմիչների ասածից էլ հայտնի է դառնում, որ կարող են կոչվել արտաքին մեհյան, և աշտարակաձև բարձրությունն էլ կանգնեցված կուռքերը բազմությանը տեսանելի դարձնելու համար էր: Իսկ բուն մեհյանը հարմար է ներքին կոչվելու, ինչպես քիչ վերը հիշատակված Աշտիշատի պաշտամունքարաններում եղածը, որ պատմիչը կոչվում է ներքին սենյակներ: Չաստվածի և նրա քուրմերի համար տեղի ընդարձակությունը կարևոր չէր:

Վանի և Բագառիճի վերոհիշյալ քարափոր սենյակներից զատ՝ Արարատ բնաշխարհում ևս՝ մի քանի տեղ, փոքր շենքերի հին մնացորդները կարծվեցին մեհյանների տեղեր: Այդպիսին էր Քաղաղ գետի եզերքին՝ Չամրլու գյուղի մոտ՝ մի քարաբլրի վրա, մեր օրերում երևացող բոլորակ քարաշատ բակի պես մի տեղ՝ միջնամասում կոտրած խարիսխ կամ մի սյուն: Սրա մի կողմին քանդակված էր տղայակերպ բազկատարած մի անձ՝ ոտքերից ներքև երկու պնակաձև փորվածք, իսկ մյուս կողմին՝ պարուրաձև գծեր:

Արագածի Աղց գյուղի մոտ էլ՝ լեռան մեջ, փորված է մի խոր տեղ՝ մատուռի ձևով՝ խորանով հանդերձ, որի մեջ կանգնեցված է մի փոքրիկ սյուն՝ երկու կողմերում կիսաբոլոր խորշեր, մարդկանց ու կենդանիների քանդակապատկերներ: Դրանք տեսնողը (Հովհ. Շահխաթունյան) հիշատակում է նաև դրանց նման վայրեր Արմավիրում և Երվանդակերտում, որոնք արժանի են նոր քննության ու նկարագրության:

Եթե այսպիսի անծանոթ ու անկարծելի վայրերը խնամքով քննվեին, գուցե դեռ հեթանոսական պաշտամունքարանների ավելի շատ հետքեր երևային, քան թե հայտնի և բացօթյա տեղերում շինվածներն են, որոնք տեսանելի լինելու պատճառով էլ շուտով աներևույթ եղան Քրիստոսի խաչի զորությամբ և Լուսավորչի ու Տրդատի ձեռքով, որոնց ավերածներից պատմիչները հիշատակել են միայն գլխավորները, իսկ մնացածների մասին հայտնում են մեկ բառով՝ ամենայն: Դրանք, եթե հայոց քրիստոնեական տաճարների բազմության հետ մտածվեն, նույնպես բազմաթիվ կարող էին լինել, բայց, ինչպես ասացինք, ոչ մեծ և ոչ նշանավոր: Եվ մեր հեթանոս նախահայրերը ավելի շատ ուխտատեղիներ դիմող են երևում, քան առանձին աղոթողներ: Մեզ էլ հարկ է այդ նշանավոր վայրերը քննել, որոնք խոսքիս կարգում շատ անգամ հիշատակվեցին, մանավանդ ամենաերևելին կամ պատմիչների կողմից այդպես համարվածը՝ Հաշտիշատը, որի անունը ևս վկայում է շատ մեհյաններ, պաշտելի և պաշտող ունենալը, ինչի պատճառով շրջակա բնակավայրը ևս դրանց հետ մեկտեղ կոչվում է այդ անունով, որ նշանակում է, ինչպես որ գրված էլ է, «մեհենագյուղ» և ոչ թե, Ագաթանգեղոսի հունարեն բնագիրը համաձայն, «շատահաշտ»՝ Рплэцпфпт, որից և լատիներեն Sacrificiis abundans-ն է: Եվ այս պատճառով էր կոչվում հայոց մեհյանների բուն տեղ, նույն կերպ և քրիստոնեության տիրապետության ժամանակ անվանվեց Եկեղեցագյուղ: Եվ ինչպես որ այդ տեղի տերը քրմապատն էր, նոր տերն էլ եղավ հայոց քահանայապետը (ս․ Գրիգորը), որից ժառանգությամբ անցավ ս․ Սահակին, որի բնիկ կալվածքն է կոչվում, ուր և թաղվեց մարմինն իսկ՝ այն իբրև վերջին ժառանգ պահելով իրեն: Եվ ինչպես հայկազունների մեծագույն կրոնական հանդեսներն էին այնտեղ կատարվում, այնպես էլ նոր կրոնապետը (Լուսավորիչը) հաստատեց, որ այնտեղ կատարվեն եկեղեցական ժողովները: Հիշատակեցինք մի քանի ուրիշ մեծ և հաճախելի պաշտամունքարաններ, որոնց շրջաբնակ վայրերն էլ դրանց պատճառով կոչվեցին Բագավան, իսկ ողջ գավառը՝ Բագարանդ, որտեղ Նավասարդի ամանորյա օրերին կատարվում էին աշխարհախումբ ազգային տոներ և հանդեսներ:

Բագարանը, որ կառուցեց Երվանդը և Արմավիրից հայոց դիցախումբը փոխադրեց այստեղ, առաջին մայրաքաղաքը լինելով, հայտնի է դարձնում, որ հայկազունների առաջին ու մեծ կրոնատեղին կամ կրոնական իշխանությունն էլ

քաղաքականին մոտ ու աթոռնակից էր, ինչպես հետո եղավ և Արտաշատ նոր մայրաքաղաքը:

Ի՞նչ պատճառով է Բագառիճը, որ նաև Բագնաց կամ Դից գյուղ էր կոչվում (Բարձր Հայքի Դերջան գավառում), եղել դիցապաշտության գլխավոր կենտրոն: Թվում է, թե արևմուտքից Արտաշեսի ու Տիգրանի բերած հունական չաստվածներին ընդունելով՝ իբրև հայոց երկրի մոտ ու առաջին բնիկ սահման, կամ քանի որ բերողները հարմար են գտել այն կողմը, որը դրկից է ու ավելի ծանոթ այդպիսի դիքերին . այնտեղի երեք գետնափոր մեհյանները և դրանց մերձակից լեռան վրայի մի մեհենատեղին հիշատակեցինք:

Նույն վիճակն են ունեցել Դերջանին սահմանակից Եգնկան, Անին, Թորդանը, Սատաղը: Վերջինում գտնված Արտեմիսը կամ Անահիտը հայ դիցապաշտության ամենանշանավոր մնացորդն է և մեկը հելլենական ճարտարագործության մնացորդներից: Եգնկայում է գտնվել նաև ներկայացվող քարեղեն քանդակը, որի առյուծները առաջին հայացքից կարծել են տալիս, որ պատկերվածը ս . Իգանտիոս Աստվածազգյացն է: Սակայն բազկաբաց անձի կերպարանքը հեթանոսության նշմար է հայտնի դարձնում: Իսկ հին Թորդանի մոտ՝ Ավագ վանքում, ներկայումս պահվում է դեղթափ կոչված քարեղեն մի քանդակ, որ է՛լ ճշտությամբ և լուսատպությամբ հանել պատկերը, որը մենք ներկայացնում ենք խավարած մոտիտով ու թանաքով գծագրվածից:

Բագավան է կոչվել նաև Բաքվի սահմանը: Ժամանակին այն հայոց 15 աշխարհներից մեկի՝ Փայտակարանի մի գավառն էր, որի պաշտելիքն էլ՝ ծանոթ բոափայլ և հրանյութ նավթը, գետնից էր բխում: Այս երկրի մի մասն էլ առանձին գավառ ու անուն ուներ՝ Յոթնփորակյան բագիններ, որ ինքնին հայտնի է դարձնում ինչ ունենալն էլ . յոթ փորված բագին՝ իբրև հրապաշտների դյուրապատրաստ ատրուշան՝ հեղուկ կրակն ընդունելու համար: Ոչ սրանք, այլ նախորդիվ հիշատակված մեհյաններն ու մի քանի անծանոթները ևս լրացնում էին հայոց մեհյանների յոթ բագինները, ուր Տրդատի հայրը՝ Խոսրով արքան, հորդորում էր . «Ոխտաւոր լինել պատկերաց կռոց դիցն պաշտաման . . . զիւր ազգին Արշակունեաց զհայրենեացն պաշտամանց տեղիսն մեծարէր»: Ըստ Ագաթանգեղոսի՝ հավանաբար սրանք Հունաստանից բերված կուռքերի դիքերն

էին: Իսկ յոթը լինելը կարող է հաստատվել նաև Ագաթանգեղոսի հիշատակածներով ու վկայությամբ և յոթ թվի՝ նաև հեթանոսների համար սրբազան համարվելով, ինչպես և հին հնդիկներն ունեին իրենց Մահալափուրամը, որ թարգմանվում է «յոթ բագիններ», պարսիկները՝ իրենց յոթ մեծ ատրուշանները, նմանապես կապադովկիացիները՝ կրակի յոթ բագիններ, և այլն՝ մի կողմ թողած հույների յոթնամյա դիքերի պաշտամունքը:

Մինչև հիմա ասածներիցս պարզ երևացին կուռքերի նյութերը ևս . թե՛ պատվական մետաղներից էին, որոնք հույն ճարտարների ձեռքի գործն են, թե՛ փղոսկրից, թե՛ պղնձից և թե՛ հասարակ նյութից՝ քարից ու փայտից, որոնք, իհարկե, ավելի շատ էին ու շատ տեղերում: Դրանց մասին մեր Լուսավորիչ հայրը հայերին ասում է (ըստ Ագաթանգեղոսի) . «Որպէս և առ ձեզդ իսկ տեսանէաք զՔարապաշտ և զՓայտապաշտ մոլորութիւնդ, որք առ տգիտութեան ի ձենջ նկարեցան . . . անշունչ անմռունչ Քարանց պագանէիք»:

Վերջին խոսքը, ինչպես ուրիշ տեղում էլ հիշատակեցինք, կարող է նշանակել նաև զուտ քարապաշտություն, մինչդեռ առաջինով հայտնի է դարձնում ձեռագործ կուռքերը՝ տաշած ու քանդակած: Եվ եթե ասածը, ըստ բառերի, ուզենք ճիշտ հասկանալ, «ի ձէնջ»-ը ցույց է տալիս, որ հայերս մեր պաշտելիքը հնարել ենք մեր իսկ արհեստավորների ձեռքով, որոնց քարագործության մեջ ճարտարությունը երևում է քրիստոնեական շինվածքներում 5-րդ դարից մինչև այսօր, և դրա ակներև վկաները Արարատի և Շիրակի եկեղեցիներն ու վանքերն են: Մետաղներից ձուլված պատկերները՝ իբրև զուտ հայկական ձեռագործ, հույներից բերվածներից զատ, կարծեմ հիշատակված չեն, թեև անհավանական էլ չեն: Իսկ պղնձե, նաև ոսկե դիցաբանական մանր քանդակներ՝ թե՛ ձուլված, թե՛ դարբնած, գտնվել են Հայաստանում, մանավանդ Վանտոսպի կողմերում . դրանց վրայի պատկերները ոմանց թվում են ասորեստանյան կերպ ունեցող: Սակայն գտնված մի քանիսի վրայի կենդանիների կամ մարդկանց պարզ կերպարանքները և զարդարձևերը չեն կարող նրանց համար հատուկ համարվել, և ավելի հավանական է, որ լինեն և հայկական: Դա ավելի կճշտվի, եթե ավելի շատ հայտնաբերվեն այդպիսիները՝ մանավանդ հողեղեն ու կավեղեն, որ, զարմանալի է, մինչև այժմ գոնե գրողիս հայտնի չեն: